

ՄԱՍԵԱՅ ԱՂԱԿՆԻ



ԾԻԱԾԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՄՍԱԳԻՐ

ԿԵՆՅԱԳՕԳՈՒՏ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ

ՀԻՆԳԵՐՈՐԳ ՏԱՐԻ

ԹԻՎ Գ. — ԱՊՐԻԼ — 1860.



ԹԼՈՂՈՍԻԱ.

ԻՏՊԱՐԱՆԻ ԿԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ.

ԱԳՈՒԼԻՍ.

Արարկեանց Մեղրն. *
Աղամաղեանց Պօղոս.
Աղանան Կապար.
Բոնայեանց Վառի.
Ճանազարեանց Ճանազար.
Ոսկանեանց Մարտեոս.
Տեր-Մկրտչեան Աեախ.
Տեր-Մկրտչեան Բրիստափոր.

ԱԳՔԻՐՄԱՆ.

Աստուածաբան Մեղրն * (1) (2 օրին).
Աստուածաբան Մերոն.
Քիւրճեան Մանուկ.

ԱՅՏԻՐՄԱՆ.

Աղարարեանց Գրիգոր. *
Այվազեանց Սարգիս.
Քարիզեանց Աղեքանդր.
Խոջամաղեանց Գրիգոր.
Խոջաղեանց Սարգիս.
Կազաչկեանց Գրիգոր. *
Յովսէփեանց Բաղասաար.
Ուլուխանեանց Գարրիկ.
Ոսկեմեանց Մկրտիչ.
Չանուանեանց Ստեփանոս.
Սահարբեանց Միքայէլ.
Սայեարեանց Յովաննէս.
Սերգեանց Մկրտում.
Սերգիսեան Բաւաստար.
Սերերաղեանց Մարտեոս.
Վառիկեանց Վառի.
Քուրթեանց Անքան.
Քուրդեանց Յակոբ.

ԱԽԼՅԻՍ.

Աղեաւորեան Յարութիւն.
Առուանեան Յովաննէս Բ.
Աստուածաբան Դիոնեսիոս.
Կրիգորեան Գրիգոր Բ.
Խառայեանեան Յովաննէս.
Հոգեւորական Ռատումարան Հայոց.
Մեծառուեանց Մարտիրոս Բ.
Մուրանեանց Կարապետ.
Յակոբանեան Յակոբ.
Յարութիւնեան Յովաննէս.
Պօղոսեան Սարգիս.
Պատուեանց Յովաննէս.
Սուրենեանց Յակոբ Ասաղ Բ.
Վարդանեանց Մանուկ Վարդան.

ԱՄՍԱԿՐԱՆ.

Լուսուորեան Նիկողայոս.
Մեծիկոյեան Յովաննէս.

ԱՍԼԱՆՊԵԿ.

Տեր-Կարապետեան Մկրտիչ.

ԳՐԻՐՈՐՈՒՊՈՒՍ.

Մերանեան Կարապետ Բ.
Մոմեան Ստեփան.
Շանիեան Դաւիթ Բ.
Սամուէլեան Բաւաստար Բ.
Քեօսեան Մկրտիչ.

ԵԱՆ.

Գալստեան Յովաննէս.
Գարազայեան Խաչրիս Բամինար.
Դրանխոյեանց Եսայի Ափազար.
Դրանխոյեանց Ստեփան.
Սարգսեան Մեղրեան.
Փոփոմիչ Գրիգոր Մեռելիքեր.

ԵՒՊԱՏՈՐԻՍ (ԿԼՅԻՆԵՎ).

Խանեան Յովաննէս.
Հանի-Պապիեան Ռաֆայէլ.
Մուրատեան Միքայէլ.
Պուստապեան Ռաֆայէլ.
Սէֆերեան Յակոբ.

ԶԷՅՎԱ.

Ալամերեանց Մկրտ-Յովաննէս-Բեկ.
Քարիսեան Փօղոսեանց Եստաբոս.
Ամիրխանեանց.

ՉՄԻՈՆԵՍԻՍ.

Ազգային Հոգաբարձուք (5 օրինակ).
Նուստիեան Յովսէփ շէլեպի.
Կաստանդեան Կալուստ.
Պաղազարեան Դուկաս.
Պարսիզպանեան Գրիգոր.

Ս. ԷՄՄԱՆԻՆ.

Աղամիրեան Գրիգոր Վ.
Բաղիանոսեան Սուքիաս.

ԼՈՏԷՄԻՇ.

Լուսաւորեան Ազգային Գարոց.

ՔԱՅՂԱՆ.

Ժողովարան Վանառակեանց.

ՔԷՄՐՈՒՐ.

Ասվատուրեանց Սարգիս.

ՔԼՈՂՈՍԻՍ.

Արամանեան Բարսեղ.
Ալեանազեան Աղեքանդր.
Ալեանազեան Յովաննէս.
Ալեանազեան Պետրոս.
Ալեանազեան Սարգիս.
Ալբուհանեան Մանուկ.
Ալբուհանեան Յովսէփ.
Ալբուհանեան Կարապետ.
Ալբուհանեան Համբարձում.
Ալբուհանեան Գրիգոր.
Այվազեան Յովաննէս.
Այվազեան Գրիգոր.
Քորոսեան Յովաննէս.
Փօփեան Դանապետ.
Եփեղեան Համբարձում.
Խաչիկեան Ռատումարան Հայոց.
Խարամբայեան Հ Յովսէփ.
Մաղերով Աղեքանդր.

Մոմեան Մեղրեան.
Չեմպրեան Վարդերես.
Պազայեան Բաւաստար.
Պալապանեան Յովաննէս.
Պալեան Սարգիս.
Պալեան Յարութիւն.
Պուլղոսեան Յարութիւն.
Պուլղոսեան Մկրտիչ.
Սերգիսեան Աղեքանդր.
Սուազայեան Մեղրեան.
Սուազայեան Յովսէփ.
Տեր-Արամանեան Յովաննէս.
Տեր-Կարսեան Մարտիրոս Բ.

ԽԱՐԱՍՈՒ.

Գարազայեան Բաւաստար.
Հիւմայիլեան Գրիգոր.
Լիմբանեան Պետրոս Բ.
Քուսանեան Աղեքանդր.
Քուսանեան Աեախ.
Ճուլարեան Հ Միմոն.
Մազրմեան Պօղոս.
Մեանիկեան Միմաս.
Միքայեան Կալուստ.
Միքայեան Մեղրն.
Մուրատեան Յարութիւն.
Շանիկեան Մկրտիչ.
Շանիկոսեան Դաւիթ Բ.
Չարբիսեան Յակոբձան.
Պարոնեան Խաչուկ.
Պարոնեան Յովսէփ.
Պեկերեան Գրիգոր.
Սեփեան Կարապետ.
Սեփեան Յովսէփ.
Տաւատեան Դաւիթ.
Տեօփերեան Քորոս.
Տիւկիսեան Եսայի.
Քեչեան Խաչուկ.
Քեչեան Միքայէլ.
Քիսպոյեան Սարգիս եւ Խաչուկ.

ԿԵՐՁ.

Երիզնիսեան Ղազարոս.
Էքմէքճեան Գարրիկ.

Խաչատուրեան Ստեփան.
Հալանեան Սարգիս.
Հեքիմեանց Սարգիս.
Մեղրեանեան Յովաննէս.
Յարութիւնեան Վարդ.
Փեչեքեանեան Գարրիկ.

ԿԼՈՐԿԵՆՍԻՍ.

Խօնայեանց Պաղտասար.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈՒՍ.

Աղարոնեան Մկրտիչ.
Ամիրաղեանց Յովաննէս.
Գալիպեան Ելան.
Գեորգ Սրբազան Պատրիարք.
Եկուեան Եղարք.
Էրիկիզեան Սարգիս.
Ընթերցասիրաց Ընկերութիւն.
Քորոսեան Գրիգոր.
Իւրիսեան Կարապետ.
Խորասանեան Գեորգ.
Խորասանեան Պետրոս.
Համբարձումեան Յովաննէս.
Հիսարիեան Սարգիս.
Ճանազեան Մարիցա օրիորդ.
Ճաղպիրեան Մկրտիչ.
Ճաղպիրեան Սրբոյն տիկին.
Ճիզմեան Միքայէլ.
Մարգարեան Յարութիւն (2 օրին).
Միսարեան Ճիսան.
Մկրեան Յովաննէս.
Մոմեան Մկրտիչ.
Մուրատեան Յարութիւն.
Յակոբոս Դաիկին Ս. Պատրիարք.
Յովաննէս Ս. Պատրիարք Երուսաղեմի.
Նորատուեան Միմոնիկ.
Նանուազեան Չեմոք.
Նեպեքեանց Փիլիպոս.
Ռատումարան Մայր Եկեղեցոյ.
Չամուրեան Յովաննէս.
Պաղտասար Գրամանա (2 օրինակ).
Պարսիզպանեան Բազար.
Պեչազեան Սերովքի.
Պեչերեան Յակոբ.
Պոչնաբեան Սարգիս.
Սանիկեան (Ս.) Ընկերութիւն.
Սարիմեան Սարիմ.
Սրվանեան Յարութիւն.
Ստամբուլեան Յարութիւն.
Վարդանեան Յովսէփ Փաշա.
Փանոսեան Կարապետ.
Փափազեան Պետրոս.
Փեչարմայեան Սանակ.
Փիլիպիեան Մոմիկ.
Փուլիսեան Աղեքանդր.
Քանեայեան Գրիգոր.
Քրիսեան Վիլիս.
Քիլիսեան Մկրտիչ.
Օսեան Պօղոս.
Ֆրեմեան Արաման.

ԿՈՐԻ.

Տեր-Ստեփանեան Վառի.

ՀԻՆ ԽՐԻՍՏ.

Թաղեանեան Կարապետ Բ.
Ժողովրդեան Գարոց.
Մարտեոսեան Յովաննէս.
Պեկեան Յովաննէս.
Փոփով Յովաննէս.

ՉՆՉԵՇՏ.

Առաքիլեան Կարապետ.
Առաքեան Պօղոս.
Եսթովիչ Մարտիրոս.

ՉՈՒՐԵ.

Չուրազեան Մանուկ.

ՂՁԱՍՐ.

Բերդեանց Համբարձում.
Իզմիրեանց Յովսէփ.

(1) Աստուանիչ ունեցողները նոցա եւ որ գրուած են նայեք եւ ուստերն ու զաղպարեան մասանց մանկամայն:



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ե Ի

Մ Ի Ա Մ Ա Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱՌՏ ԵՒ ՉԱՐԻՔ ԶՐԳԱՐՏՈՒԹԵԱՆ.

Չանազան լրագրաց եւ թղթակցութեանց շատնալուն մեծամեծ օգուտներէն մէկն ալ այս է անշուշտ մեր ժամանակներն՝ որ եթէ յանկարծ տարափոխիկ հիւանդութիւն մը, այսինքն ժանտախտ կամ մաղձախտ եւ կամ ուրիշ վնասակար հիւանդութիւն երեւնայ աշխարհիս մէկ կողմը, իսկոյն կիմացուի մինչեւ հեռաւոր երկիրներ. որով տէրութիւնք եւ մասնաւոր մարդիկ պէտք եղած զգուշութիւնները շուտով կրնեն մարդկօրէն, եւ ըստ կարի ազատ կմնան փորձանքէ: Այս անախորժ, բայց հարկաւոր պաշտօնք պէտք է կատարէ ամենայն օրագիր, այսինքն երբօր — Աստուած պահէ — բնական կամ բարոյական ժանտախտի մը սկզբնաւորութիւնը տեսնէ, պէտք է իմաց տայ իւր բնթերցողաց եւ զգուշացնէ զանոնք:

Այս անգամ հարկադրեալ է նաեւ մեր ամազիրք ժանուցանել որ գրպարտութեան ժանտախտը բնկեր է տեղ տեղ ազգիս մէջ, եւ շատ անգոյշ մարդիկ կառնու կտանի:

Հին ատենէն իվեր ճանչցուած դառն ճրջմարտութիւն է որ մեր ազգին բարոյական հիւանդութիւններուն մէջ նախանձը այնպէս սովորական ու գրեթէ սեպհական ախտ է՝ ինչպէս որ քանի մը բնական հիւանդութիւններ այս կամ այն տեղոյն սովորական հիւանդութիւնը կճանչցուին. զոր օրինակ յեզիպտոս աշքի ցաւը, յԱմերիկա դեղին ջերմը, իՀընդկաստան մաղձախտը (*cholera*), իԿովկաս տենդը (*typhus*), եւ այլն: Բայց նախանձուն ըրած կոտորածները որքան ալ սաստիկ լինէին՝ իրեն թովերը միայն կմնային՝ քանի որ իզբրպարտութիւն չէին փոխուեր ու տպագրութեամբ չէին հրատարակուեր, եւ գրքերով կամ լրագրերով երկրէ երկիր չէին երթար անոր ժայթքած թոյները:

Իսկ այժմ քանի որ տպագրութեան օգտակար արուեստը վնասակար կերպով բանեցրեցողներ ամէն տեղ սկսեր են երեւնալ, զարմանք չէ որ մեր ազգին մէջ եւս նախանձն ու ատե-

լութիւնը իրենց զրպարտական թոյները թափեն եւ ապականեն առողջ մտքերը: Այս նոր բարոյական ժանտախտին վրայ երկու խօսքով տեղեկութիւն տամք ընթերցողաց:

Աշխարհիս թշուառութեանցը մէջ սոսկալի չարիքներէն մէկն է զրպարտութիւնը, այսինքն այն ախար՝ որով մէկը իբրեւ կատաղի գազան՝ ուրիշի չունեցած յանցանքը վրան կղկէ, եւ բառ այնմ ալ կխօսի եւ կամ կգրէ:

Յայտնի է թէ այսպիսի չարութեան ետեւէ ընկնողը հարկ է որ խիղճ, Աստուած, հաւատք, օրէնք, մարդկութիւն, քաղաքավարութիւն, ամէնն ալ մոռցած կամ մէկդի դրած լինի կամաւորապէս. ուստի եւ արժանի է այն ողորմելին *բանաստիճ* կամ *սասանայ* բուռելու՝ քան թէ մարդ. վասն զի զրպարտութիւն ընողին խելքը միտքը ո՛չ ապաքէն այն է որ անմեղին վնաս հասցընէ, բարի եւ բարերար մարդուն դէմ չարիք գործէ, եւ զրպարտած անձին թըշնամիներուն անզգամական ուրախութիւն մը պատճառէ, որ է յիրաւի դիւական չարագործութիւն: Ասոր համար գրոց լեզուաւ այս ախար *բանաստիճիւն* կըսուի. իսկ *զրպարտութիւնը* այս մտքով աւելի ռամկօրէն է, եւ տաճկերէն *իփրիւս* բառին նշանակութիւնն առած է:

Զրպարտութեան վնասները աւելի մեծ եւ աւելի ողբալի են այնպիսի յետամնաց ժողովրդոց մէջ որ իրենց բարեմտութիւնը չեն կորսընցուցած, եւ զամէն մարդ իրենց պէս բարեմիտ կարծեն. իրենք ճշմարտախօսութեան սովորած՝ չեն մտածեր թէ ստախօսներ եւս կգտնուին մարդկանց մէջ. ուստի եւ սուտը ճշմարտի տեղ կընդունին միամտութեամբ, մանաւանդ երբ այն ստութիւնը գրով եւ տպագրութեամբ հրատարակուած է:

Բայց զրպարտութիւնը իրեն արուեստ՝ բան ու գործ ընողին վաստակն ինչ է արդեօք. ինչ կհասկընայ արդեօք սուտեր շինելէն եւ ուրիշները խաբելէն: — Կերեւնայ թէ զրպարտութիւն ընողին միտքը նախ այս է որ վնաս մը հասցընէ այն մարդուն՝ որոյ վրայ ինքը կընախանձի, կամ որոյ դէմ ռիս եւ ատելութիւն ունի, կամ թէ դիւական սովորութեամբ՝ իրեն զուարճութիւն ըրեր է անմեղին չարիք հասցընելը: Երկրորդն ալ այս՝ որ իր զրպարտած մարդուն դէմ զրգոյէ զամէնքը, եւ այնպէս

ընէ որ զրպարտութիւն ընողները ժամանակ ալ չունենան ճշմարտութիւնը քննելու հասկընալու, այլ իսկոյն հաւատան իրենց լսած չարախօսութեանցն, ու դատեն դատապարտեն զանմեղը:

Զրպարտութիւն ընողին սրտին մէջ կարծես թէ որդ մը կայ որ հանգստութիւն չտար իրեն. այն պժգալի որդը իրեն անզգամական կիրքը եւ ատելութիւնն է, որով ինքը անհանգիստ լինելէն ետեւ՝ ուրիշներն ալ անհանգիստ ընելու կաշխատի անդադար: Իրեն մի միայն հանգստութիւնն է բարւոյն՝ չար բսել, լուսոյն՝ խաւար, առաքինութեան՝ մոլութիւն, ճշմարտութեան՝ ստութիւն, անմեղութեան՝ կեղծաւորութիւն, արիութեան՝ յանդգնութիւն, խոհեմութեան՝ վախկոտութիւն, երկիրզած բարեպաշտութեան՝ խաւարասիրութիւն, խոհական ուսումնասիրութեան՝ անկրօնութիւն, քաղաքավարութեան՝ շողոքորթութիւն, խնայողութեան՝ ազահութիւն, առատաձեռնութեան՝ շքուայլութիւն, համբերութեան՝ վատութիւն, խոնարհութեան եւ հեզութեան՝ ցածութիւն, վեհանձնութեան՝ ամբարտաւանութիւն, բարեգործութեան՝ փառասիրութիւն, ժուժկալութեան՝ գծծութիւն, մէկ խօսքով՝ իւր չունեցած կամ կորուսած կատարելութիւնները կարծէ թէ ուրիշներն ալ չունին կամ պէտք չէ որ ունենան, եւ ամէնքն ալ իրեն նման են ի չարիս, մանաւանդ իրեն ատած անձը: Ինքը սուտ փառքի կամ անիրաւ շահու մը ետեւէ ընկած է. մէկը կելլէ անոր արգելք կընէ, իսկոյն իւր չարաթոյն լեզուն կտրէ անոր դէմ: Բժիշկ մը կտեսնէ ճարտար եւ գիտուն, — նա բժիշկ չէ, հիւանդներուն թոյն խմցընող է կըսէ: Գատաւոր մը կտեսնէ արդար եւ անաչառ, — կաշառք ուտող է կըսէ: Քահանայ մը կտեսնէ համեստ եւ աշխատասէր, — կեղծաւոր եւ շահասէր կամ փառասէր է կըսէ: Վաճառական մը կտեսնէ խօսքի տէր, ստրկի տէր, — խաբեբայ գող եւ աւազակ է կըսէ: Վերջապէս զրպարտչին չարալեզու զրպարտութիւններէն ազատ մնալու ճար չկայ՝ ոչ մեծի՝ ոչ պզտրկի, ոչ հարստի՝ ոչ աղքատի, ոչ աշխարհականի՝ ոչ եկեղեցականի, ոչ վաճառականի՝ ոչ արհեստաւորի, ոչ բժշկի՝ ոչ հիւանդի, ոչ ծառայի եւ ոչ ազատի:

Զարմանք չէ ուրեմն որ Քրիստոսի Տեառն մերոյ զրպարտիչ թշնամիները՝ նորա ըրած

բժշկութիւններուն՝ կախարհութիւն ըսին, եւ ժողովրդեան մէջ ձայն հանեցին թէ Սյո մարդը անով կհալածէ դեւերը մարդկանց մէջէն որ իւր մէջ դիւաց գլխաւորը բնակած է. «Բեեդ-գեբուդաւ իշխանան դիւաց հանէ դա գրեւ»։ Բարեմիտ առաքեալը զարմանք ցուցուցին թէ իրենց բարի գործերը ինչպէս կհամարձակին չար մեկնել Հրէից դպիրներն ու կեղծաւոր փարիսեցիները. իսկ երկնաւոր վարդապետն մեր իւր օրինակովը մխիթարեց զանոնք. եթէ իմ անունս մեծ դիւահար հաներ ես, բաւ, եւս առաւել զձեզ մէկմէկ դիւահարի տեղ կը դնեն. ուստի պէտք չէ որ զարմանաք. «Եթէ զտանուտէրն Բեեդգեբուդ կոչեցին, որչափ եւս առաւել զընտանիս նորա»։ Սյն տուած մխիթարութիւնը բաւական չհամարելով, երանի ալ տուաւ ընդհանրապէս իւր ամենայն աշակերտաց՝ երբոր զուր տեղը եւ ճշմարտութեան համար՝ շարախօսութիւն, նախատինք, բամբասանք եւ ամէն տեսակ ծաղրածութիւն լսեն իրենց թշնամիներէն. երանի ձեզի, բաւ, վասն զի մարդիկ այդպէս վարուեր են միշտ նաեւ ձեզմէ առաջ եղած մարգարէներուն հետ. «Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածիցեն, եւ ասիցեն զամենայն բան չար զձէնչ սուտ վասն իմ. ցնծացէք եւ ուրախ լերուք, զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին»։ Ըսել է որ եթէ կուզեմք մեզմէ առաջ եղած մարգարէից եւ առաքելոց երանութեանն ու փառքին հասնիլ, պէտք է նոցա պէս համբերեմք՝ երբոր զուր տեղը դատուիմք ու դատապարտուիմք անիրաւ մարդիկներէ։ Օրինակի համար, եթէ Սեմէի մը ելլէ մեր դիմացը՝ ի նախանձով եւ սխալալ դառնութեամբ, եւ ձեռքովը հող ու քարինք թափէ մեր վրայ, բերնովն ալ անէծք եւ հայհոյութիւն ժայթքէ մեզի դէմ, պէտք է որ մենք վրէժխնդիր չըլինինք. պէտք է Գաւթ մարգարէին պէս պատասխանեմք նոցա որ մեզի խրատ կուտան վրէժխնդրութիւն ընելու՝ եւ կգոչեն. «Ընդէր անիծանէ այնպէս շուն մի մեռեալ գտէր իմ. անցուք եւ առցուք զզլուս նորա»։ Պէտք է ըսեմք նոցա. «Թոյլ տուք նմա. թող «անիծցէ այնպէս, զի Տէր ասաց նմա անիծանել զԳաւթ. եւ ո՞վ ասացէ թէ ընդէր «արարեր այսպէս։ Թոյլ տուք նմա զի անիծցէ, թերեւս տեսցէ Տէր, եւ հատուցէ ինձ

«բարիս փոխանակ անիծից նորա յաւուր «յայսմիկ»։

Եթէ զրպարտեալը նաեւ այս հոգեւոր մտաքով երջանիկ ու երանելի է, — որպէս եւ է իսկ իրօք —, յայտնի բան է որ զրպարտիչը հազար ու բիւր վայի արժանի է յԱստուծոյ եւ իմարդկանէ։ Ո՞չ ապաքէն Կայենի նշանն ունի նա ձակտին վրայ, եւ թափառական կրքալէ աշխարհիս երեսը. վասն զի իւր սպաննած անմեղին արիւնը յերկինս կբողոքէ եւ կհալածէ զինքը։ Քան զայս աւելի ինչ պատիժ կրնայ տրուիլ զրպարտիչ մարդասպանին։ Եւ սակայն ահա ամենայն ազգաց քաղաքական օրէնքներն ալ կմիանան Աստուածադիր օրինաց հետ՝ զրպարտչին արժանաւոր պատիժը տալու նաեւ մարդկօրէն։

Գամք զրպարտութիւնը լսողներուն կամ մտիկ ընողներուն։ Արդեօք ինչէն է որ մարդիկ ընդհանրապէս ակտրածնօք մտիկ կընեն զրպարտութեան, եւ դիւրաւ կհաւատան զրպարտական խօսքերու, որով եւ ոյժ ու համարձակութիւն կուտան զրպարտիչներուն։

Սյո բանիս առաջին եւ գլխաւոր պատճառ՝ մարդուս անկարգ նորասիրութիւնն ու հետաքրքրութիւնն է, որով անդադար նոր նոր բաներ, կարգէ դուրս դիպուածներ, խառնակիչ խօսքեր ու զարմանք բերող գործողութիւններ կուզէ լսել. եւ եթէ լսողին բնական հետաքրքրութիւնն աւելի, խելքը կարճ կամ պակաս պատահի, եւ կամ ինքն ալ զրպարտչին խելքին հաւնած ու անոր կրիցը մասնակից լինի, ինչպէս չհաւատայ լսածին կամ կարդացածին. այնպէս հաստատ կհաւատայ որ եթէ բնես իրեն որ գուցէ զրպարտութիւն (*խփրա*) է, պատասխան կուտայ թէ զրպարտութիւն ալ ըլլայ նէ՞ յարմար զրպարտութիւն (*ույար խփրա*) է, եւ կդատապարտէ զանմեղը առանց քննութեան եւ դատաստանի։

Իսկ խելացի եւ առաքինի մարդը ականջը կփակէ որ արդար մարդուն դէմ զրպարտութիւն չլսէ. «Խնու զականջս իւր առ իշխելոյ զարդարոյ զանիրաւութիւն»։ Եւ եթէ լսէ, ու հարկ համարի մտադրութիւն ընել լսածին, անձամբ կքննէ, եւ ոչ օտարի աչքովն ու խելքովը. անաչառ կերպով, եւ ոչ մէկուն մէկալին հաճոյանալու մտքով։ Գիտէ թէ զգոյշ կենալու է այն մարդէն որ խելք ունի, բայց

խելքը աւելի չարութեան կբանեցրնէ՝ քան թէ աղէկութեան. գիտէ թէ զգոյշ կենալու է այն մարդէն որ կիրք մը ունի ուրիշներու դէմ, ու այն կիրքէն կատարած՝ անդադար կիրքիրայ, եւ մէկը մէկալը խածնելու կենայի. արդարութիւն, ճշմարտութիւն կկանչէ, եւ ինքն աղբիւր է ամենայն անիրաւութեան եւ ստութեան. աւագակ է մեծ ճանապարհի, եւ անցնող դարձողին վրայ կյարձրկի, կզարնէ կրկողոպտէ, ու գիշակեր զազանի պէս լեռնէ լեռ կփախչի՝ նորէն իջնալու մտքով: Խելացի մարդը կզգուշանայ կըսեմ այնպիսի անզգամ մարդիկներէ. եւ երբեմն իւր զգուշութիւնն ալ բաւական չհամարելով՝ առ Աստուած կըղիմէ արասուօք, եւ կաղաղակէ մարգարէին հետ. „Փրկեան զիս ի զրպարտութենէ մարդկան“:

Մեր ազգին մէջ՝ թէ արեւելք եւ թէ արեւմուտք՝ Աստուծոյ ողորմութեամբը սակաւաւոր են զրպարտիչներն ու չարախօսները, մանաւանդ զրով չարախօսութիւն բնող եւ մէկուն մէկալին անուեր քաշքշող մարդիկ. վասնզի աստուածպաշտութիւն, խիղճ, մարդկութիւն, պատկառանք, համեստութիւն եւ զթութիւն բուած առաքինութիւնները դեռ շատ կըզտնուին մեր հասարակ բարեմիտ ժողովրդոց մէջ, ու եւրոպական լուսաւորութեան պակասաւոր կողմին ապականիչ յատկութիւնները, որ են անխղճութիւն՝ բնող անուամբ ազատութեան խղճի, անպատկառութիւն՝ բնող անուամբ ազատ դատողութեան, եւ անօրէն անզթութիւն՝ բնող անուամբ անկեղծ ճշմարտախօսութեան, դեռ չեն մտած ամէն տեղ: Բայց զբրպարտութեան սիրով մտիկ բնողներ, եւ լսածներուն միամտութեամբ հաւատացողներ աւելի շատ կզտնուին մեր ազգին՝ քան թէ ուրիշ յառաջադէմ ազգաց մէջ. ուստի եւ երկու երեք չարախօսներ բաւական կըլլան ամբողջ

մէկ ժողովուրդ մը իրենց բանասարկութիւններովը խաբելու, խաղցրնելու եւ վրովելու: Եւ ասոր պատճառն է, ինչպէս որ բսինք, մեր ժողովրդոց մէջ մտաւորական յառաջադիմութեան պակաս ըլլալը, որով կարողութիւն ունենայ ալ նէ՝ սովորութիւն ըրած չէ իւր լսած բաներուն իսկութիւնը քննելու, դատելու, եւ ըստ այնմ հաւատալու կամ մերժելու: Իսկ երբոր այս ինչ կամ այն ինչ չարախօսութիւնը գրով կամ տպագրութեամբ եւս հրատարակուած կտեսնէ, անտարակուսելի ճշմարտութեան տեղ կը դնէ զայն, եւ զրեթէ մեղք կհամարի զբքի խօսքին չհաւատալը:

Այս պակասութիւնը որքան եւ մեծ համարուի հանճարեղ ժողովրդեան մը համար, սակայն անդամանելի եւ անուղղելի պակասութիւն չէ. միայն թէ արթուն կենան եւ զգուշանան զրպարտիչներէն: Պէտք է յիշեն մեր բարեսիրտ ժողովուրդները, որ դրախտին մէջն անզամ բանասրկուն սատանայ իւր չարութիւնը բանեցուց իվնաս բողանողակ ազգի մարդկան, եւ Աստուծոյ պատուիրանը ոտքի տակ առնել տուաւ մեր նախածնողաց, ուստի եւ պիտի չզարմանան թէ ինչո՞ւ համար ամէն տեղ, եւս եւ մեր ազգին մէջ, բանասրկու մարդիկ չեն պակսիր: Միանգամայն այս ալ չմոռնան թէ իրենք պէտք չէ որ միամիտ գտնուին. ուստի եւ ամենայն բանասրկութեան եւ զրպարտութեան մտիկ չընեն կամ չհաւատան թեթեւութեամբ: Ինչպէս որ ամօթ կհամարուի վաճառական մարդու մը խաբուիլ, ու անպիտան ապրանքը ազնիւ բանի պէս սուղ սուղ գնել, կամ սուտ ստակը ճշմարտի տեղ եւ ապակիի կտորը գոհարի տեղ բնողնիլ, այսպէս պէտք է ամբշնայ ամենայն մարդ՝ երբոր լսած կամ կարդացած ամէն մէկ խօսքը չքննէ ըստ կարի, այլ միամտութեամբ եւ թեթեւութեամբ բնողնի կամ մերժէ:

ՇԱՄԻԼ

Եւրոպան Ասիայէն բաժնող Կովկաս լեռանց ընդարձակ գօտիներուն հիւսիսային կողմը կիշնայ Ձերքեղիստան, Սեւ ծովուն եւ Կասպից ծովերուն մէջտեղը:

Ձերքեղաց կամ եգերացոց բնական պատերազմաւէր եռանդն ու քաջութիւնը կվառէր նաեւ իրենց բարձրաբերձ ու դժուարակոխ լեռներուն դիրքը. անոր վրայ վստահութիւններ

լրամ՝ երեսուներհինգ տարիէ իվեր անխոնջ յատերազմեցան Ռուսիոյ մեծագոր կայսերութեանը հետ, իրենց հոգեւոր տաաշնորդ եւ միանգամայն զօրավար ունենալով Շամիլ իմամը:

Բայց քանի մը տարիէ իվեր քաղաքագէտ անձինք մէկ կողմանէ Ռուսիոյ մեծամեծ պատրաստութիւնները, եւ միւս կողմէն Շամիլին

տկարանալը եւ ձերացեալ հասակը տեսնելով՝ սկսեր էին զուշակել թէ Ձերբեզիստանի նուաճուելուն ժամանակը մօտեցեր է. եւ ահա 1859-ին սեպտեմբեր ամսոյն մէջ կատարուեցաւ նոցա զուշակութիւնը, ինչպէս որ ասկէց առաջ եւս պատմեցինք:

Շամիլ լեռնական ազգերուն *Լեզլի* քուած ցեղէն ծնած է 1799-ի՛ Տաղստանի *Կոււրի* ա-



Իմամ եւ մարիտը.

նունով ամուսն գեղը: Հայրը հովիւ է եղեր, եւ շատ անգամ իւր որդիին գեղէ գեղ դեղձ ծախելու կյուղարկէ եղեր. բայց *Ղազի-Մոլլա* անունով հռչակաւոր լեռնականը, որ այն կողմերուն եւ այն ժամանակին *մխարիսներուն իմամը*, այսինքն տաճիկ կրօնաւորներուն գլուխն էր, տղուն վրայ կարգէ զուրս բնգունակութիւն եւ կրօնական բաներու սէր մը տեսնելով, ատեն ատեն քովը կառնէր զինքն ու կկարդա-

ցրներ, եւ միտքը զուրանին պատերազմական հոգւոյն եռանդովը կկեցրներ:

Երբոր 1852-ին *Ղազի-Մոլլան* Կոււրիի քով եղած պատերազմին մէջ Ռուսներէն զարնուեցաւ ու մեռաւ, եւ տեղը *Համգա-Պէկ* կամ *Համգաթ-Բէկ* իմամը անցաւ, Շամիլ նորա գրեխաւոր օգնականներէն ու խորհրդականներէն մէկն եղաւ, եւ նորա խորհրդովը սպաննուեցան Սւարացւոց խաները՝ որ Ռուսաց տէրու-

Թեան հաւատարիմ էին: Համգա-Պէկը Աւարացիէ մը զարնուեցաւ մեռաւ մզկիթի մէջ, եւ Կովկասի կողմերը ձայն ելաւ թէ ճամիլն ալ սպանուեր է. բայց ժամանակէ մը վերջը, մինչդեռ միւրիտները խորհրդի ժողովուեր էին որ մէկը իրենց իմամ ընտրեն, ճամիլ յանկարծակի նոցա մէջ գտնուեցաւ: Իսկոյն զինքն ընտրեցին՝ իբրեւ հրաշքով կենդանացած մարդ, եւ այնուհետեւ բոլոր Տաղստանի մէջ մեծ աւուր հանեց: Երբոր Ռուսք Ախուլքո ամրոցը առին, ճամիլի համբաւը քիչ մը կտարեցաւ. բայց 1840-ին հինգ հարիւր միւրիտով զնաց Չեչեն ըսուած լեռնականներուն տիրապետեց, զանոնք հեռացուց Ռուսաց մօտ եղած տեղերէն ու Կովկասու ներսերը քշեց, եւ ինքը *իջֆեր* ըսուած լեռներուն դժուարակոխ եւ անառիկ Տարոս գեղը բնակեցաւ: Այն ժամանակէն սկսաւ ճամիլի տիրապետութեան համբաւը ամէն տեղ տարածուիլ: Իմամութեանը ութերորդ տարին 250,000 տնուորի վրայ իշխանութիւն ունէր Տաղստանի մէջ, եւ Ռուսաց դէմ պատերազմած ժամանակները այնչափ ճարտարութիւն ու քաջութիւն երեցուց որ ոչ միայն իմամ՝ այլեւ սպարապետ ճանչցուեցաւ ամենէն: Իւր հրամանին դէմ կեցողները մէկէն կըսպանէր, եւ ամենուն այնպէս հասկըցուցեր էր — թերեւս ինքն ալ այնպէս դրեր էր միտքը — թէ ինքը հասարակ մարդ չէ, այլ մարգարէի պէս մէկն է, եւ յետուծոյ դրկուած է Տաղստանը կառավարելու:

Ճամիլին Ռուսաց դէմ ըրած պատերազմները երբեմն կյաջողէին, երբեմն ալ ձախտրդ կերթային. լեռնականներն ալ յաջողութեան ժամանակը կպատուէին ու կսիրէին զինքը, իսկ ձախտրդութեան ատեն կպաղէին անկէց: Այսպէս եղաւ նաեւ անցեալ տարի, եւ օգոստոսի 25-ը ճամիլի իշխանութեանը վերջին օրն էր: Եւ թէպէտ արդէն պատմեցինք նորա բռնուելուն համառօտ պատմութիւնը, բայց այս անգամ որ դէմքը կընծայեմք՝ քանի մի պարագաներ աւելի տեղով յիշատակեմք:

Կովկասու Փոխարքայ Վսեմափայլ Պարեաթինսքի իշխանը իւր բազմաշխատ օրօք քիչ ժամանակէն ձեռք ձգելուն տարակոյս չունէր. «Գնացէք գրուցեցէք ճամիլին, ըսաւ, որ եթէ շուտով չելէ՝ բանակս չգայ, ես անձամբ երկու օրէն կերթամ իւր ամրացած բերդին մէջ զինքը կտեսնեմ»:

Այն խօսքին վրայ զայրացաւ ճամիլ, իւրսաւ ուուս դեսպանաց որ Պարեաթինսքին ոչ միայն երկու օրէն կարող չէ բերդս գալ մտնել, այլ եւ ոչ երկու ամսէն, եւ ոչ երկու տարիէն: —

Շուտ մը հրաման տրուեցաւ զօրաց որ Կուենիպին վրայ յարձրկին: Սաստիկ նեղը մըտաւ ճամիլ, եւ բոլորովին յուսահատած՝ յանձն առաւ անձամբ Պարեաթինսքի իշխանին բանակը երթալ ու անձնատուր լինել: Ինքը ձի հեծած էր. աշակերտներէն, այսինքն միւրիտներէն երկու հոգի ձիուն սանձը բռնած էին. տասը միւրիտ առջեւէն կերթային, քսանը հինգ ալ ետեւէն կուգային տխուր դիմօք:

Պարեաթինսքի իշխանը՝ ոտքը ցաւելուն պատճառաւ քարի մը վրայ նստած էր: Իւր սպայքը չէին ուզեր որ ճամիլ գէնքերովն ելլէ առջեւը. բայց իշխանը լեռնականաց կասկածոտ բնութիւնը գիտնալով՝ չթողուց որ գէնքերը առնուն ճամիլի վրայէն:

Երբոր ճամիլ եկաւ Պարեաթինսքիին քովը մօտեցաւ «Գուն չուզեցիր ինձ գալ, ըսաւ իշխանը, ա՛հա ես քեզի եկայ: Այժմ մեր մէջ տարբերութիւն չկայ. եւ որովհետեւ պատերազմի մէջ բռնուեցար, իմ ձեռքէս այս միայն կուգայ որ քու եւ ընտանեացդ կեանքը ապահովեմ. անկէց աւելին՝ իմ տիրոջս կայսեր ձեռքն է: Ա՛հա Թրոմփուսքի գնդապետը գքեզ Փեթրպուրկ պիտի տանի»: Փեթրպուրկի անունն որ լսեց ճամիլ, վայրենի աչքով մը գնդապետին վրայ նայեցաւ. յետոյ իմացան որ խեղճ իմամը կարծեր է թէ Թրոմփուսքիին հրաման ընդունած էր իւր գլուխը կտրելու:

Ճամիլ շատ խնդրեց որ զինքը իւր սիրելի լեռներէն չբաժնեն. բայց երբ իրեն հասկըցուցին թէ ճար չկայ, անպատճառ պէտք է որ Փեթրպուրկ Կայսեր երթայ, ձին հեծաւ ու ճանապարհ ելաւ. հետը կերթային մէկ կողմէն Եւտոքիմով զօրապետը, եւ միւս կողմէն Թրոմփուսքի գնդապետը, եւ ետեւէն երկու թարգման եւ խումբ մի ձիաւոր զօրք:

Իրիկուան դէմ անտառի մը քով հասան. ճամիլ հրաման խնդրեց որ քիչ մը կենայ հոն, երեկոյեան նամագն ընէ. եւ որովհետեւ ճամիլ կարծէր թէ զինքը մեռցրելու կտանին, մահուան պատրաստութեան աղօթքներ կընէր. եւ երբեմն երբեմն աչքերը դէպ իպատերազ-

մին դաշտերը կղարձրենք՝ որ լի էին իւր միւրիտներուն ղիակներովը: Այնպիսի մեծ տազնապի մէջ էր որ անդադար ջուր կուզէր կիսէր, եւ դարձեալ կպապակէր:

Գիշերը տարին զինքը բանակը՝ ուր փառաւոր վրան մը պատրաստուած էր նորա համար: Տեսնելով որ փայլուն արծաթէ ամաններով չայ կրհրամքընէն իրեն, մահուան վախը քիչ մը սրտէն փարատեցաւ:

Սեպտեմբերի 7-ին Շամիլի քով հասան ետեւ իւր բնտանիքը. էմինէթ եւ Շուանէթ կանայքը հետերնին քսանհինգ սնտուկ բերին, յորս տուպրակի մը մէջ 7,000 բուպլիի չափ կար՝ որ հազիւ 28,000 ֆրանք կրէ. որով սուտ կելլեն Շամիլին կարծեցեալ անթիւ անհամար զանձուցը վրայ եղած խօսքերը: Կրսեն թէ իմամը այն եօթը հազար բուպլիէն աւելի ստակ չուներ, եւ ոչ բաւական հագուստ. այնպէս որ Տէմիր-Խան-Շուրա քաղաքն որ հասան՝ հարկ եղաւ որ իրեն եւ միւրիտներուն համար հագուստ շինել տան հայ ղերձակներու:

Ճամբան ամէն անցած տեղերը լեռնականներէն հազարաւոր արք եւ կանայք ընդառաջ կուգային, լալով ողբալով վերջին հրաժեշտի ողջոյնը կուտային իրենց իմամին, եւ էրիկմարդիկ զօրաց մէջէն անցնելով՝ կերթային նորա հագուստը կհամբուրէին:

Թրամփովսքի զնդապետը կանանց խնամքը Աստուածատրեան անուևով հայկազն սպային յանձնեց, որ զօրացը այլ եւ այլ երաժշտութիւններ ընել տալով՝ զանոնք կզուարճացրէր, եւ Շուրա քաղաքին մէջ իրենց շուտ մը հագուստ ու զարդ գնելով՝ մխիթարեց:

Աղօթքի ժամանակները չէր անցրէր Շամիլ. ուր որ գտնուէր՝ հրաման կխնդրէր ու նամագը կկատարէր: Տէմիր-Խան չմտած՝ յանկարծ հիւանդացաւ, եւ միւրիտները ուզեցին հասկըցընել իրեն թէ թունաւորուած է. բայց քաղաքին բժիշկը ղեղ մը տալով՝ շուտ մը ստամոքսին ցաւերը կտրեց:

Շամիլ առաջին անգամ երոպական կենաց դիւրութեան համն առաւ՝ Շուրա քաղաքին մէջ՝ Պարոն Վրանկէլիին փառաւոր բնակարանը: Հինգ օր կեցաւ հոն մինչեւ որ մեր ղերձակներն իւր նոր հագուստները շինեցին պատրաստեցին:

Շամիլին Կովկասէն անցած ժամանակը ուս զօրաց զգացած ուրախութիւնն անպատմելի

էր. վասն զի քանի որ զինքը կտեսնէին՝ մտքերնին կուգար անոր ձեռքէն իրենց քաշած բազմամեայ նեղութիւնները:

Սեպտեմբերի 1-ին հասան Ճամբորդները Մոզտոք քաղաքը, ուր կընակի Ուլուխանեան հայազգի հարուստ վաճառականը, որ Շամիլի Շուանէթ կնոջը եղբայրն է: Ուլուխանեանը մեծահաց ընդունելութիւն ըրաւ իւր քրոջը, Շամիլին ու բոլոր նորա մարդիկներուն:

Սեպտեմբերի 8-ին Թրամփովսքի զնդապետը իւր ուղեկցօքը հասաւ Խարքով քաղաքն ու հրաման ընդունեցաւ Չուկույեւի երթալու, եւ Շամիլը ներկայացնելու Վեհափառ Ա.Ղ.Ե.Ք.ՍՍ.Ն.Ի. Կայսեր: Անկարելի է նկարագրել իմամին եւ միւս զերեւոյց ուրախութիւնն ու ցնծութիւնը՝ երբ իրենց իմացուցին թէ կարող են առանց գէնքերնին հանելու՝ Կայսեր առջեւն ելլել: Նոյնպէս ուրախացան երբ իմացան թէ անկէց Մոսքուա եւ Փեթրպուրկ հոյակապ քաղաքները պիտի երթան տեսնեն, որոց անուանքն այնչափ գովեստներով լսեր էին. եւ ամենէն աւելի Շամիլ կփափաքէր զանոնք աչքովը տեսնել, եւ հասկընալ թէ իւր ձեմալ-Էտտին որդւոյն պատմածները ամէնն ալ ստոյգ են:

Վեհափառ Կայսրը մարդասիրաբար ընդունեցաւ զՇամիլ, եւ ղիմացը զօրահանդէս մը ըրաւ, յորում Շամիլ՝ Կայսեր քովէն ձին հեծած արշաւակի կվագըրէր, ու մեծ զարմանք եւ զուարճութիւն կցուցրէր:

Խարքովի կուսակալին ըրած ցայգահանդիսին ալ զնաց Կայսեր հետ. կանանց թեթեւ զարդերուն վրայ գայթակղելով եւ ապշելով մը ետեւ ետեւ քաշուեցաւ, եւ առջի բերան աշուրները գոցեց որ չտեսնէ:

Երբոր քալեց տեսաւ Թուլա քաղաքին զինարանը, որ կարող է իսկոյն հարիւր հազար հոգի սպառազինել, հիացաւ զարմացաւ, յիշեց որդւոյն ըրած նկարագրութիւնը՝ որում չէր հաւատացած, եւ արտասուքը չկարելով բռնել՝ սկսաւ լալ:

Հիմա Շամիլ Քալուկա քաղաքը կընակի հանգիստ, եւ այն տեղն անցուցած կեանքը, վարմունքը, խօսքերը հետզհետէ զիր անցընելով կհրատարակէ այս միջոցիս Փեթրպուրկի օրագրին մէջ Թուևովսքի զնդապետը, որում յանձնուած է Շամիլի խնամքն ու պահպանութիւնը:

ՓՐԵՂԵՐԻԿՈՍ-ԳՈՒԼԻԷ ԼՄՈՍ-ԼՈՒԴՈՎԻԿՈՍ



ԽՆՍՄԱԿԱՆ ՓՐԻՍՏԻՈՅ.

Փրուսիոյ Փրեղերիկոս Գուլիելմոս Դ թագաւորը 1857-ին ծանր հիւանդութիւն մը ունեցաւ, եւ բժշկաց խորհրդովը ստիպուեցաւ կառավարութեան հոգը վրայէն թողլու. եւ ո-

րովնտեւ զաւակ չունէր, իշխանութիւնը յանձնեց իւր եղբօրը Փրեղերիկոս-Գուլիելմոս-Լուդովիկոս իշխանին, որ սկսաւ երկիրը կառավարել՝ Թեամակալ անուամբ:

Փրեղերիկոս-Գուլիէլմոս-Լուզովիկոս ծնած է 1797-ին մարտի 22-ին: Ինչպէս որ կենդանագրէն եւս կերեւնայ, զեղապատշաճ է եւ անձնեայ: Բրուսիոյ 1813-ին եւ 1815-ին Գաղղիոյ դէմ ըրած պատերազմներուն մէջ շատ անգամ քաջութիւններ ըրաւ. երբոր 1840-ին եղբայրը թագաւորեց, ինքն ալ Փոմերանիա նահանգին կուսակալ անուանեցաւ, եւ այնուհետեւ միշտ տէրութեան զործոցը մէջ մեծ ազդեցութիւն ունեցաւ, մինչեւ որ խնամակալութեան պաշտօնին հասնելով՝ բոլոր տէրութեան կառավարութիւնը ձեռք առաւ եւ

առաջ կտանի:

Ամուսնացած է 1829-ին Սաքս-Վէյմարի մեծ դքսին աղջկանը հետ: Երկու զաւակ ունեցաւ. առաջինն է Փրեղերիկոս - Գուլիէլմոս - Նիկողայոս - Կարոլոս, ծնեալ յՅ1 հոկտեմբերի 1831. եւ երկրորդն է Մարիամ - Լուիզ - Եղիսաբեթ, ծնեալ յՅ զեկտեմբերի 1838:

Անդրանիկը՝ Փրեղերիկոս - Գուլիէլմոս - Նիկողայոս - Կարոլոս՝ ամուսնացաւ 1857-ին Անգղիոյ թագուհւոյն առջինեկ Վիկտորիա աղջկանը հետ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱՐՏ ԵՒ ԱՊՐԻԼ ԱՄՍՈՅ ՎՐԱՅ

ՄԱՐՏ.

Տարւոյն երրորդ ամիսը զրեք ամեկայն եւրոպական ազգք եւ քանի մի արեւելեայք մարտ կոռնէն՝ բառին վերջաւորութիւնը դոյզն ինչ փոփոխելով. օրինակի համար, մեք Հայքս մարտ կրսեմք, Տանիկք՝ մարտ, Ռուսք՝ նոյնպէս մարտ, Յոյնք՝ մարտիոս, Լատինք՝ մարտիոս, Գերմանացիք՝ մարտ, Անգղիացիք՝ մարտ. Գաղղիացիք՝ մարտ, Իսպացիք՝ մարտ, եւ այլն:

Այս այլ եւ այլ ազգերը յայտնի է քէ հին Հռովմայեցւոցմէ առեւ եւս այս անունը. բայց գործածութեանն ու վախճանին վրայ այլ եւ այլ կարծիքներ կան. մեք այս տեղ համառօտեմք այն կարծիքները, եւ նոյն ամսոյն, ինչպէս նաեւ յաջորդ ամսոց վրայ եղած գլխաւոր պատմական եւ ուսումնական գիտելիքները:

Մակրոբիոս լատին պատմիչը կրսեք քէ Հռովմայեցւոց իշխանութեան հիմնադիր Հռոմուլոսին հայր եղբէր Մարս կամ Արկա, որ պատերազմի աստուածն էր: Հռոմուլոս ուզելով հորը յիշատակը մեհնջեցաւոր ընել մարդկանց մէջ, տարւոյն առաջին ամսոյն անունը՝ յանուն նորա Մարս կամ Մարտիոս դրաւ: Շատերուն կարծիքն ալ այն է որ Հռոմուլոս իւր իշխանութիւնը հաստատած ժամանակը՝ դրացի ժողովրդոց հետ անդադար պատերազմելու ստիպուած լինելով՝ տարւոյն առաջին ամիսը պատերազմաց Մարս (Արկա) աստուածոյն անունովը անուանեց:

Հռոմուլոսի յաջորդեց Նոմա Պոմպիլիոս. սորա խաղաղաւէտ քաղաւորութեան ժամանակը՝ մարտ ամիսն իւր առաջին յարգը կորսնցուց, միանգամայն եւ առաջնութեան պատիւը. տարւոյն երրորդ ամիսն եղաւ, եւ այն երրորդ կարգին մէջ մնաց մինչեւ ցայսօր: Տարւոյն տասներկու ամիս բաժնուէլին իվեր 31 օրեք ձեւացած էր մարտ ամիսը, եւ միշտ նոյնպէս անփոփոխ մնաց մինչեւ ցայժմ:

Իսկզբան բոլոր մարտ ամիսը նուիրած էին Հռովմայեցիք պատերազմի աստուածոյն, եւ առաջին օրը ի յիշատակ վերադարձին արեւու՝ Վեստա աստուածուհւոյն բազնին վրայի նուիրական հուրը կնորոգելին՝ նոյն իսկ արեւէն կիզիչ ապակիով (փերքիսիզ) վառելով: Ետերը նուիրեցաւ Արեմաս աստուածուհւոյն, եւ իպատիւ նորա 19-ին հանդիսաւոր տօն կկատարէին հինգ օր: Այն տօնն աւելի արհեստաւոր տօն կհամարուէր, եւ աւակերք իրենց վարժապետաց ընծաներ կուտային: Ամսոյն 17-ին կկատարուէր Բաֆոսի տօնը, որ զինոյն եւ արբեցութեան պատշապան շատուածն էր: Այն ամսոյն մէջ կկատարուէր նաեւ Վեստա աստուածուհւոյն տօնախմբութիւնը:

Մարտ ամսոյն մէջ արեւը հարաւային կիսագնէն կելլէ, հիւսիսային կիսագունքը կմտնէ: Մարտի 11-ին (քս նոր տմարի) արեւը հասարակածին հարաւակողմը կլինի՝ Ջրոս կենդանակերպին զրեք վրան. 7-ին կմտնէ Չուկն համաստեղութեան մէջ, եւ 20-ին կը հասնի զարեւոնային հասարակածի եւ զիւրեանաւարի կէտին՝ առաւօտեան ժամը 9-ին 14 վայրկէնին. անկէ կանցնի հասարակածին հիւսիսային կողմը, եւ մինչեւ ամսոյն վերջը երթալով կխաւարնի: Արեւուն միջօրեական բարձրութիւնը ամէն օր կաւելնայ. նառազայրներն աւելի խոսոր կերպով մեզ կը հասնին, որով եւ բարեխառնութիւնը կամ ջերմութիւնը կաւելնայ. այնպէս որ երբ մեկը բնէն դիտէ բարեխառնութեան ասիւնանները, անոնց միջին քիւկզնէ մարտի համար՝ 6 ասիւնան եւ 58', իսկ փետուարի համար 5 ասիւնան եւ 99':

Երբեմն կպատահի որ փետուարի վերջերը օդը կը կակրղնայ, այնպէս որ կարծես քէ զարուեր սիսաւ, եւ ձմեռուան սառնամանիքը անցան գնացին. բայց շուտով կիմացուի որ դեռ զարուեն եկած չէ. վասն զի այն մեղմիկ ու անոյշ օրերուն ետեւէն կուզան յանկարծ ցրտաստոյց օրեր եւ առաս եղեամ. որով

ասեցէ դուրս կոխած ջերմութեան բանալ տուած կոնակներն ու բողբոջները կայրին կխամբին: Երբ մարտի առաջին օրերուն օդը մեղմ պատահի, սովորաբար գիշերահաւասարի օրերուն եղանակը սասիկ ցուրտ կլինի: Երբ մարտի սկիզբը սասիկ հովեր փրշեն, եւ օդը շատ ցուրտ լինի, ամսոյն մեջտեղուանը զգալի փոփոխութիւն մը կեստնուի. այսինքն ջերմաչափին սիւնակը վեր կելլէ կբարձրանայ, եւ զարեան քայքայութիւնը կսկսի երեւնալ: Այն ժամանակ երկնին երեսը սեպ սեպ խոտոր ամպերով կծածկուի, եւ յորդ՝ բայց սակաւասեւ անձրեաններ կուգան. շատ անգամ այն անձրեաններուն իջած ժամանակը արեւուն պայծառութիւնը շերտաւոր, որով քէ արեւ եւ քէ անձրեւ կունենան միանգամայն:

Երկրագործութեան կողմանէ շատ հարկաւոր են մարտին մէջ փշոզ պաղ քամիները, մանաւանդ արեւմտեան հիւսիսային քամին, ինչպէս որ շատ անգամ փորձելով բնած են իրաւամբ գեղացիք. «Չոր ու ցուրտ մարտը ոչ երբեք սով կբերէ.» ըսել է քէ Երկրագործ մարտին մէջ պէտք է վախճան յորդ ու երկարատեւ անձրեաններն, որով իրենց վարուցանը կաւրի կապականի:

Մարտին մէջ սեպ կպատահին սասիկ փոքորիկներ, մանաւանդ ծովու վրայ մերիկներ. ուսի եւ ծովային նանապարհորդութիւններէ զգուշանալու է: Օդն ալ բաւական չափ ջրներ որ բոյներ ծին ծաղկին, այլ հազիւ մարտի վերջերը կսկսին կենդանանալ՝ ծիլ արձակել:

Մարտի 14-ին որ օրուան Երկայնութիւնն է 10 ժամ եւ 58 վայրկեան, 51-ին՝ այսինքն վերջին օրը կլինի 12 ժամ 47 վայրկեան: Այս անուր շատ մեծ է, եւ բոլոր ամսոյն մէջ կլինի 4 ժ. 52 վ., որով 4 ժամ 4 վայրկեանը՝ առաւօտեան առնելու է, եւ 48 վայրկեանը՝ երեկոյին: Արեւուն նառազալներն աւելի չափ են, եւ օրուան անեղովը կարող են երկիրը սափցնել, որով եւ գիշերներն այնչափ ցուրտ չեն լինիր: Քեպէտեւ սարի եղած է որ մարտին մէջ շատ ցուրտ բնած է, ինչպէս անցեալ սարի ջերմաչափը զոյնն երկու ասիւնան վար իջաւ այն տեղերը՝ ուր սովորական սարիները միշտ զոյնն հինգ վեց ասիւնան վեր կլինեն:

Լուսինը մարտի 1-ին Յուլ համաստեղութեան մէջ կլինի, վասնզի երկրի շոռն դին շոջան բնած ժամանակը՝ հետ գնե՛տէ կպսրքի նաեւ գողիակոսի կենդանակերպից բոլորսիքը:

Փայլածուն մարտին մէջ կգտնուի Չկան կենդանակերպին վրայ, եւ արեւուն մտնելէն ի՞նչ մը ետքը կը տեսնուի:

Արուսեակը կհնայ ամեն երկուսն դիտուի: Հրասը առաւօտու դեմ միայն կեստնուի. քեպէտեւ ամեն օր կհնայ տեսնուիլ Երկաւոր կենդանակերպին մէջ, բայց նառազալը կնուագի: Լուսնբազի արբանեակները կհնան բոլոր ամիսը դիտուիլ:

Երեւակը կեստնուի բոլոր գիշերն Առիւծին մէջ: Ուրանոսը կհնայ տեսնուիլ իրիկունը Յուլ կենդանակերպին մէջ:

ԱՊՐԻԼ.

Մակրոբոս լատին մասեցեագիրը կըսէ քէ Հռոմոս լու սարւոյն երկրորդ ամսոյն անունը *ափրիլիս* դրաւ՝ լատին *Ափրոպիսկ* կամ *Ասպիկ* շաստաւածուհուն, որ իբր քէ իրեն՝ անով եւ Հռովմայեցոց՝ մայրը կհամարուէ: Բայց ուրիշները սպրիլի անունը կասեցանցոց *ափրֆրի* (բանալ) բայէն կհանեն, վասնզի կըսեն՝ այն ամսոյն մէջ երկիրս իւր ծոցը կբանայ եւ ամեն տեսակ բոյս կբուսցրնէ:

